ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՏՈՒԿ ՊԱՇՏՊԱՆՎԱԾՈՒԹՅՈՒՆ ՊԱՀԱՆՋՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՏՊԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

№ «ԱԳՆ-ԾՀԱՇՁԲ-17/4-5»

ք. Երևան «27» փետրվարի 2017թ.

ՀՀ արտաքին գործերի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Շ.Ավագյանի, որը գործում է ՀՀ արտաքին գործերի նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԷՅ ԷՄ ՓԻ ՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա.Թառոյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է հատուկ պաշտպանվածություն պահանջող պետական նշանակության փաստաթղթերի տպագրական աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետև՝ Աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Աշխատանք.

ա) Չընդունել Աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Աշխատանքը սույն պայմանագրին համապատասխանող Աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված Աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված Աշխատանքի արդյունքը, իսկ Աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 2 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի կատարման ենթակա Աշխատանքի ընդհանուր գինը կազմում է 34,500,035 (երեսունչորս միլիոն հինգ հարյուր հազար երեսունհինգ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված Աշխատանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 25.12.2017թ.:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

---

[1] *Պայմանագիրն օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում կհատկացվեն ֆինանսական միջոցներ և կկնքվի համաձայնագիր:*

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող Աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ արտաքին գործերի նախարարություն	«ԷՅ ԷՄ ՓԻ ՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
Երևան 0010, ք.Երևան Վ.Սարգսյան 3	Իրավ հասցե՝ ք.Երևան, Չարենցի 25
ՀՎՀՀ 02527728	Գործ. հասցե՝ ք.Երևան, Բագրևանդ 82
Հ/Հ900011196202	«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՀ ՖՆ աշխատակազմի	Հ/Հ 2474900126603312
գործառնական վարչություն	ՀՎՀՀ 01531784
Գլխավոր քարտուղար՝ Շ.Ավագյան	էլ. հասցեն՝ ampggroup@yahoo.com,
	Հեռ. (010)530914
	Տնօրեն՝ Ա.Թադևոսյան
_____	_____
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված 1
«27» փետրվարի 2017թ. կնքված
№ «ԱԳՆ-ՇՀԱՇՁԲ-17/4-5» ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՁԱՓԱԲԱԺԻՆ 1
Պաշտպանված ձևաթուղթ

1	Թղթի տեսակը	Պաշտպանված թուղթ, քաշը՝ 100գ/մ^2
2	Տպագրությունը	Չափը՝ A4, գունավոր 4+0, համարակալում առջևի կողմից, ներքևի կենտրոնական մասում
3	Պաշտպանվածության տպագրական միջոցները	**1. Պաշտպանված թուղթ՝** Պատված է կարմիր տեսանելի մանրաթելերով և ՈՒՄ լույսն արտացոլվող կարմիր, կապույտ մանրաթելերով: **2. Պաշտպանված հետնապատկեր՝** Երկու գույնից կառուցված մանրագծերով պատկեր: **3. Գելեոշիրային էլեմենտ՝** Շընդատվող գծերից բաղկացած գծանկար: **4. Միկրոգրություն՝** Ընթեռնելի է դառնում խոշորոցման դեպքում: **5. ՈՒՄ ներկ՝** Այս ներկով տպված բոլոր օբյեկտները անտեսանելի են և տեսանելի են դառնում միայն ՈՒՄ լույսի ներքո: Պարունակում են միկրոգրություն և գելեոշիրային էլեմենտ: **6. Գույն փոխող ներկ՝** ՈՒՄ լույսի ներքո փոխում է գույնը: **7. Հատուկ ներկով պատկեր OVI** Այս ներկով տպված օբյեկտը շոշոփելի է ձեռքով և տարբեր անկյունների տակ դիտվում է երկու տարբեր գույներով **8. Հոլոգրամմա՝** Որի գույները փոփոխվում են տարբեր անկյունների տակ և արտացոլում են Հայաստանի Հանրապետության զինանշանի և դրոշի գույները **9. Անհատական համարակալում և կոդ՝** Յուրաքանչյուր ձևաթուղթ ունի իր անհատական համարը և կոդը: Կոդն իր մեջ պարունակում է անհատական համարակալում և այլ անհրաժեշտ տեղեկություններ:
4	Ձևաթղթերի փաթեթավորումը	250-ական խմբաքանակներով, պոլիէթիլենային փաթեթի մեջ, որոնք սոսնձված են ձևաթղթերի վերևի կողմից
Քանակը 49,998 հատ (Հերթական համարակալումով՝ նախապես համաձայնեցնելով պատվիրատուի հետ)		

ՀԱՎԱԲԱԺԻՆ 2
ՀՀ ՄՈՒՏՔԻ ՎԻԶԱ

ՄՈՒՏՔԻ ՎԻԶԱՅԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

1. **Պաշտպանված թուղթ՝**
   Պատված է ՈՒՄ լույսն արտացոլվող կանաչ և կապույտ մանրաթելերով

2. **Պաշտպանված հետնապատկերներ՝**
   Մանրագծերով կառուցված նախշեր

3. **Միկրոգծեր՝**
   Տարբեր հաստությունների միկրոգծեր, որոնցով կառուցվում են բարդ հյուսվացքներ

4. **Միկրոգրություն՝**
   Ընթեռնելի է դառնում միայն խոշորոցման դեպքում

5. **Գելեոշիրային էլեմենտ՝**
   Չընդատվող գծերից բաղկացած գծանկար

6. **Թաքնված պատկեր՝**
   Տեսանելի է դառնում օպտիկական ֆիլտրի օգնությամբ

7. **Կանաչ ՈՒՄ ներկ՝**
   Այս ներկով տպված բոլոր օբյեկտները անտեսանելի են և տեսանելի են դառնում միայն լույսի ներքո և արտացոլվում են կանաչ գույնով

8. **Հոլոգրամմա՝**
   Որի գույները փոփոխվում են տարբեր անկյունների տակ և արտացոլում են Հայաստանի Հանրապետության զինանշանի և դրոշի գույները

9. **Անհատական համարակալում՝՝**
   Յուրաքանչյուր վիզան ունի իր անհատական համարը

10. **Միկրոկտրվացք՝**
    Տարբեր անկյունների տակ կան տարբեր ձևով կտրվացքներ, որոնք բացառում են վիզայի երկրորդ անգամ օգտագործելու հնարավորությունը

11. **Հատուկ ներկով պատկեր OVI**
    Այս ներկով տպված օբյեկտը շոշափելի է ձեռքով և տարբեր անկյունների տակ դիտվում է երկու տարբեր գույներով

Մուտքի վիզաների փաթեթավորումը՝ 500-ական խմբաքանակներով, պոլիէթիլենային փաթեթի մեջ:

Քանակը 84,900 հատ (Հերթական համարակալումով՝ նախապես համաձայնեցնելով պատվիրատուի հետ)

ՁԱՓԱԲԱԺԻՆ 3

ՀՀ ՎԵՐԱԴԱՐՁԻ ՎԿԱՅԱԿԱՆ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ
1. ՀՀ վերադարձի վկայականը 21 x 14 սմ չափսերով ուղղանկյուն ձևաթուղթ է: 2. Ձևաթղթի դիմերեսի վերևի մասում գլխատառերով տպագրվում է հայերեն՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և անգլերեն՝ «REPUBLIC OF ARMENIA» բառակապակցությունը՝ 1) կենտրոնում ուլտրամանուշակագույն լույսի տակ արտացոլվող գունավոր ներկերով պատկերվում է Հայաստանի Հանրապետության զինանշանը. 2) Հայաստանի Հանրապետության զինանշանից ներքև գլխատառերով տպագրվում է հայերեն՝ «ՎԵՐԱԴԱՐՁԻ ՎԿԱՅԱԿԱՆ» և անգլերեն՝ «CERTIFICATE OF RETURN» բառակապակցությունը, իսկ դրանից ներքև դրվում է վկայականի անհատական համարը, որն ուլտրամանուշակագույն լույսի տակ արտացոլվում է կանաչ գույնով: 3. Ձևաթղթի դարձերեսի վրա հայերեն, ռուսերեն և անգլերեն՝ ստորև ներկայացվող հաջորդականությամբ, հատկացված են տեղեր՝ նշելու համար հետևյալ տեղեկությունները՝ 1) Հայաստանի Հանրապետության դեսպանություն/հյուպատոսություն - քաղաք. 2) տրված է (վկայականը տալու օրը, ամիսը, տարեթիվը): 4. Սույն տեխնիկական բնութագրի 3-րդ կետում նշված գրառումներից հետո յուրաքանչյուր մասում համապատասխան լեզուներով տպագրված են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ/ՎԵՐԱԴԱՐՁԻ ՎԿԱՅԱԿԱՆ» և «Վկայականը տալիս է Հայաստանի Հանրապետություն վերադառնալու իրավունք» բառակապակցությունները: Այնուհետև, վերստին հատկացված են տեղեր՝ նշելու համար հետևյալ անհրաժեշտ տեղեկությունները՝ ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան թվականը (օրը, ամիսը, տարեթիվը), ծննդյան վայրը, վկայականն ուժի մեջ է մինչև (օրը, ամիսը, տարեթիվը): 5. Ձևաթղթում տեղ է հատկացվում նաև վկայականի անվանատիրոջ՝ 35 x 45 մմ չափսի լուսանկարի և վկայականը տրամադրող պաշտոնյայի ստորագրության համար: 6. Վկայականի ձևաթուղթը պատրաստվում է պաշտպանված թղթից, որը պատված է տարբեր գույների՝ ուլտրամանուշակագույն լույսի տակ արտացոլվող մանրաթելերով: Վկայականի տպագրության համար օգտագործվում են հետևյալ պաշտպանիչ միջոցները՝ 1) իրիս տպագրություն. գույնից գույն սահուն անցում. 2) պաշտպանված հետնապատկեր. մանրագծերով կառուցված նախշեր. 3) գելեոշիրային տարր. չընդհատվող գծերից բաղկացած գծանկար. 4) միկրոգրություն. ընթեռնելի է դառնում միայն խոշորացման դեպքում. 5) անհատական համարակալում. 6) ուլտրամանուշակագույն ներկ. այս ներկով տպված բոլոր օբյեկտներն ուլտրամանուշակագույն լույսի ներքո արտացոլվում են կանաչ գույնով:
ՀՀ վերադարձի վկայականների փաթեթավորումը՝ 250-ական խմբաքանակներով, պոլիէթիլենային փաթեթի մեջ:
Քանակը 30,799 հատ (Հերթական համարակալումով՝ նախապես համաձայնեցնելով պատվիրատուի հետ)

Աշխատանքի կատարման ժամկետը	
ՀՀ վերադարձի վկայականի և պաշտպանված ձևաթղթի մատակարարումը 2017թ-ի մարտ ամիս, իսկ ՀՀ մուտքի վիզայի մատակարարումը 2017թ-ի հուլիս ամիս:	
սկիզբը	ավարտը
Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո	01.08.2017թ.

* Կատարողը աշխատանքի արդյունքը մատակարարում է Պատվիրատուի նշված հասցեում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ արտաքին գործերի նախարարություն
Երևան 0010, ք.Երևան Վ.Սարգսյան 3
ՀՎՀՀ 02527728
Հ/Հ900011196202
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
Գլխավոր քարտուղար՝ Շ.Ավագյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«ԷՅ ԷՄ ՓԻ ՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
Իրավ հասցե՝ ք.Երևան, Չարենցի 25
Գործ. հասցե՝ ք.Երևան, Բագրևանդ 82
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2474900126603312
ՀՎՀՀ 01531784
էլ. հասցեն՝ ampggroup@yahoo.com,
Հեռ. (010)530914
Տնօրեն՝ Ա.Թադևոսյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 2
«27» փետրվարի 2017թ. կնքված
№ «ԱԳՆ-ՇՀԱՇՁԲ-17/4-5» ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N	Աշխատանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.	Հատուկ պաշտպանվածություն պահանջող պետական նշանակության փաստաթղթերի տպագրություն			12001535	12001535	12001535	12001535	34500035	34500035	34500035	34500035	34500035	34500035	34500035

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ արտաքին գործերի նախարարություն
Երևան 0010, ք.Երևան Վ.Սարգսյան 3
ՀՎՀՀ 02527728
Հ/Հ900011196202
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
Գլխավոր քարտուղար՝ Շ.Ավագյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ԷՅ ԷՄ ՓԻ ՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
Իրավ հասցե՝ ք.Երևան, Չարենցի 25
Գործ. հասցե՝ ք.Երևան, Բագրևանդ 82
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2474900126603312
ՀՎՀՀ 01531784
էլ. հասցեն՝ ampggroup@yahoo.com,
Հեռ. (010)530914
Տնօրեն՝ Ա.Թադևոսյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
«27» փետրվարի 2017թ. կնքված
№ «ԱԳՆ-ՇՀԱՇՁԲ-17/4-5» ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2017թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 2017թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 2017թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«27» փետրվարի 2017թ. կնքված
№ «ԱԳՆ-ՇՀԱՇՁԲ-17/4-5» ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 2017թ. ------- -ին կնքված N ----------
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 2017թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1

27 փետրվարի 2017թ. № ԱԳՆ-ՇՀԱՇՁԲ-17/4-5 գնման պայմանագրի

ք. Երևան *16 օգոստոսի 2017թ.*

ՀՀ արտաքին գործերի նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Շ.Ավագյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Պատվիրատու», մի կողմից, և «ԷՅ ԷՄ ՓԻ ՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա.Թառոյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Կատարող» մյուս կողմից կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի № 972-Ա որոշումը՝ 27.02.2017թ. կնքված № ԱԳՆ-ՇՀԱՇՁԲ-17/4-5 ծածկագրով Պայմանագրի № 1 հավելվածով սահմանված առաջին չափաբաժնի տեխնիկական բնութագիրը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Հավելվածի:

2. Այլ պայմաններ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է 27.02.2017թ. կնքված № ԱԳՆ-ՇՀԱՇՁԲ-17/4-5 ծածկագրով Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3. Սույն Համաձայնագիրը կնքվում է հայերեն լեզվով երկու օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ արտաքին գործերի նախարարություն
Երևան 0010, ք.Երևան Վ.Սարգսյան 3
ՀՎՀՀ 02527728
Հ/Հ900011196202
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
Գլխավոր քարտուղար՝ Շ.Ավագյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«ԷՅ ԷՄ ՓԻ ՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
Իրավ հասցե՝ ք.Երևան, Չարենցի 25
Գործ. հասցե՝ ք.Երևան, Բագրևանդ 82
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2474900126603312
ՀՎՀՀ 01531784
էլ. հասցեն՝ ampggroup@yahoo.com,
Հեռ. (010)530914
Տնօրեն՝ Ա.Թառոյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված

16 օգոստոսի 2017թ. կնքված համաձայնագրի՝
№ «ԱԳՆ-ՇՀԱՇՁԲ-17/4-5» ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*
ՉԱՓԱԲԱԺԻՆ 1
Պաշտպանված ձևաթուղթ

1	Թղթի տեսակը և պաշտպանվածության տպագրական միջոցները	**1. Պաշտպանված թուղթ՝** ջրանշանով թուղթ 95 գ՝ պատված տեսանելի կարմիր, կանաչ մանրաթելերով և անտեսանելի կանաչ, կապույտ մանրաթելերով, որոնք տեսանելի են միայն ուլտրամանուշակագույն լույսի ներքո: **2. Իրիս տպագրություն՝** գույնից գույն սահուն անցում: **3. Պաշտպանված հետնապատկեր՝** մանրագծերով կառուցված հետնապատկեր: **4. Գիլյոշիրային էլեմենտ՝** չընդհատվող գծերից բաղկացած գծանկար, որը տեսանելի է միայն ուլտրամանուշակագույն լույսի ներքո: **5. Միկրոգրություն՝** տեսանելի է դառնում խոշորացման դեպքում: **6. Հատուկ ներկով պատկեր OVI՝** այս ներկով տպված օբյեկտը տարբեր անկյունների տակ դիտվում է երկու տարբեր գույներով: **7. Դաջվածք՝** մանրագծերով դաջվածք (Հայաստանի Հանրապետության զինանշանը): **8. Անհատական համարակալում և կոդ՝** յուրաքանչյուր ձևաթուղթ ունի իր անհատական համարը, որն ուլտրամանուշակագույն լույսի ներքո փոխում է գույնը: **9. Ուլտրամանուշակագույն ներկ՝** այս ներկով տպված օբյեկտներն անտեսանելի են և տեսանելի են դառնում միայն ուլտրամանուշակագույն լույսի ներքո:
2	Տպագրությունը	Չափը՝ A4, գունավոր 4+0, համարակալում առջևի կողմից, ներքևի կենտրոնական մասում
3	Ձևաթղթերի փաթեթավորումը	250-ական խմբաքանակներով, պոլիէթիլենային փաթեթի մեջ, որոնք սոսնձված են ձևաթղթերի վերևի կողմից
Քանակը 49,998 հատ (Հերթական համարակալումով՝ նախապես համաձայնեցնելով պատվիրատուի հետ)		

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ արտաքին գործերի նախարարություն
Երևան 0010, ք.Երևան Վ.Սարգսյան 3
ՀՎՀՀ 02527728
Հ/Հ900011196202
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
Գլխավոր քարտուղար՝ Շ.Ավագյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ԷՅ ԷՄ ՓԻ ՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
Իրավ հասցե՝ ք.Երևան, Չարենցի 25
Գործ. հասցե՝ ք.Երևան, Բագրևանդ 82
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2474900126603312
ՀՎՀՀ 01531784
էլ. հասցեն՝ ampggroup@yahoo.com,
Հեռ. (010)530914
Տնօրեն՝ Ա.Թարոյան

(ստորագրություն)
Կ.Տ.